

- 41 Յեա տնտեսելոյ շնորհիւ երկնատուր  
Ըզմայրաքաղաքն եւ զայլ շէն անձնիւր  
Տրամագրութեամբ յամենայն աւուր  
Հոգածեալ կարգէր զանուանի վանք իւր :
- 42 Վանքն այն վաղեմի էր տապան ամուր  
Սուրբ կարապետի նշխարաց մաքուր,  
Յորոց Սուրբ Գրիգոր Աղգիս լուսատուր  
Ընդ այլ նշխարաց ըզմասն ինչ առնոյր :
- 43 Յաւուրսն յայնստիկ նոյն սուրբ ուխտ նեղիւր,  
Ի ներքոյ պարտուց որ էր իբրու բիւր,  
Զոր փրկել անտի նախորդք իւր ի զուր  
Զանացեալ էին տարազու անդիւր :
- 44 Նմին իրի նա լեալ զերթ մարդ անուր  
Մեկնեալ ի թեմէն վաղվաղէր յայլուր,  
Ի բառնալ զայն պարտք արօք այլոց յոյժ դիւր  
Վշտաց վտանգաց եղեալ անձնատուր :
- 45 Շըջեալ աստ եւ անդ հասեալ յԱտանայ  
Անտի յԱսորիս եւ ի Բերիայ  
Յամենայն ուրեք շուք, տուրս ըստանայ,  
Ապա ճոխ արդեամբ յաթոռ իւր դառնայ :
- 46 Վճարեալ զայն պարտք մտօք դիւրանայր,  
Ի Բիւզանդիա շոյտ անդրէն երթայր,  
Ի՛ անտի պատրաստեալ աահ գործել փութայր  
Առ Էջմիածին դիմել անպատճառ :
- 47 Որ եւ տանէր անդ սրկիհ ինչ սոկեայ  
Գեղեցկապածոյճ եւ անդամանդեայ,  
Զոր վարդապետ իւր առաքէր յրնծայ  
Սրբոյ տաճարին դահին հայկազնեայ :